# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 636-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N745-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերություն-ների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) նախարարության կառուցվածքում ընդգրկված՝ նախարարության հիմնա-կան մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող լիցեն-զիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչությունը բաժանել՝ ստեղծելով.

ա. ջրային ռեսուրսների կառավարման վարչություն,

բ. կենսառեսուրսների կառավարման վարչություն,

գ. թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կանոնա-դրությունը հաստատելու մասին» N 745-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացում-ները և փոփոխությունները՝

1) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ կետերով՝

«4.1. Նախարարության պաշտոնական կայքն է՝ www.env.am:

4.2. Նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեն է՝ minenv@env.am:».

2) որոշման հավելվածի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«32. Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) ջրային ռեսուրսների կառավարման վարչությունը.

2) ռազմավարական քաղաքականության վարչությունը.

3) միջազգային համագործակցության վարչությունը.

4) իրավաբանական վարչությունը.

5) կլիմայական քաղաքականության վարչությունը.

6) մթնոլորտային քաղաքականության վարչությունը.

7) ջրային քաղաքականության վարչությունը.

8) անտառային քաղաքականության վարչությունը.

9) բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչությունը.

10) հողերի և ընդերքի քաղաքականության վարչությունը.

11) վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչությունը.

12) կենսառեսուրսների կառավարման վարչությունը.

13) թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

10.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ